# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 1
# № ԳՀԱՊՁԲ-20-9/1-2 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան

27 -ը մայիսի 2020թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության պետ Ն. Յոլյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև «Գնորդ», մի կողմից և **«Արփիմեդ» ՍՊԸ-ն՝** ի դեմս ընկերության տնօրեն **Վ. Ղազարյանի**, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, այսուհետև՝ «Վաճառող», երկուսը միասին՝ Կողմեր, հիմք ընդունելով **19.12.2019թ.** կնքված № **ԳՀԱՊՁԲ-20-9/1-2** գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.15 կետը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

## 1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը, հիմք ընդունելով համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու փաստը, փոխադարձ համաձայնությամբ որոշեցին կնքել սույն Համաձայնագիրը՝ սահմանելով Ապրանքների գնման և վճարման ժամանակացույցեր՝ համաձայն Հավելված № 1-ի և 2-ի:

1.2 Վաճառողը պարտավորվում է սույն Համաձայնագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին (այսուհետև՝ Ստացող) մատակարարել՝ Պայմանագրի տեխնիկական բնութագրերով նախատեսված ապրանքներ (այսուհետև՝ Ապրանք)՝ համաձայն № 1 Հավելվածով սահմանված գնման ժամանակացույցի, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար՝ վճարման ժամանակացույցով՝ հավելված N 2-ով, նախատեսված ժամանակահատվածում:

## 2. Գինը և վճարման կարգը

2.1 Սույն Համաձայնագրի ընդհանուր գինը կազմում է ***3,301,500 (երեք միլիոն երեք հարյուր մեկ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն***, որը ներառում է Համաձայնագրի կատարումն ապահովելու նպատակով կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ նաև հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

2.2 Գնորդն իրեն հանձնած Ապրանքի դիմաց վճարումը կատարում է Պայմանագրի 3.3 կետով նախատեսված կարգով, ***15 բանկային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան 10.12.2020թ.:***

## 3. Այլ պայմաններ

3.1 Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Ապրանքի մատակարարման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

3.3 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.4 Սույն Համաձայնագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն Համաձայնագրի անբաժանելի մասը:

3.5 Սույն Համաձայնագիրը կազմված է 3 էջից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն համաձայնագրի N 1 և 2 Հավելվածները հանդիսանում են սույն Համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.6 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Գնորդի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման գլխավոր վարչությունը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում **ՀՀ ԶՈՒ ռազմաբժշկական վարչությունը:**

## 4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

**ԳՆՈՐԴ**

ՀՀ պաշտպանության նախարարություն
ք. Երևան Բագրևանդի 5
ՀՀ ՖՆԱ գործառնական վարչություն
Հ/Հ 900011144129
ՀՎՀՀ 02522157
ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության պետ

Ն. ՅՈԼՅԱՆ

**ՎԱՃԱՌՈՂ**

«Արփիմեդ» ՍՊԸ
ք. Աբովյան 2-րդ մ/շրջ., 19 շ.
«Արդշին բանկ» Աբովյան մ/6
Հ/Հ 2471000494250010
ՀՎՀՀ 03519299
տնօրեն

Վ. ՂԱԶԱՐՅԱՆ

Հավելված N 1
N ԳՀԱՊՁԲ-20-9/1-2 պայմանագրին կից
N 1 Համաձայնագրի

# ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Չ/հ | Ապրանքի անվանում | Չ/Մ | Քանակ | Միավորի գինը /ՀՀ դրամ/ | Ընդհանուր գումար /ՀՀ դրամ/ | Մատակարարումը՝ 2020թ., ըստ համապատասխան եռամսյակների, այդ թվում՝ | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | 2-րդ եռամսյակ | 3-րդ եռամսյակ | 4-րդ եռամսյակ, բայց ոչ ուշ քան 30.10.2020թ. |
| 1. | Ամլոդիպին (ամլոդիպինի բեզիլատ), amlodipine (amlodipine besilate) | հատ | 3,000 | 8.50 | 25,500 | 1500 | | 1500 |
| 11. | Տետրացիկլին tetracycline | հատ | 200 | 360 | 72,000 | 100 | | 100 |
| 15. | Բետամեթազոն (բետամեթազոնի վալերատ) betamethasone (betamethasone valerate) | հատ | 400 | 840 | 336,000 | | 200 | 200 |
| 16. | Բետամեթազոն (բետամեթազոնի դիպրոպիոնատ), կլոտրիմազոլ , գենտամիցին (գենտամիցինի սուլֆատ),betamethasone (betamethasone dipropionate), clotrimazole, gentamicin (gentamicin sulfate) | հատ | 500 | 1,800 | 900,000 | | 250 | 250 |
| 27. | Էրիթրոմիցին, erythromycin | հատ | 1,800 | 528 | 950,400 | 900 | | 900 |
| 32. | Էրիթրոմիցին (էրիթրոմիցինի էթիլսուկցինատ) erythromycin (erythromycin ethylsuccinate) | հատ | 400 | 450 | 180,000 | | | 400 |
| 38. | Կետոկոնազոլ ketoconazole | հատ | 800 | 1,002 | 801,600 | | 800 | |
| 49. | Հիդրոկորտիզոն (հիդրոկորտիզոնի ացետատ ) hydrocortisone (hydrocortisone acetate) | հատ | 50 | 720 | 36,000 | 50 | | |
| **Ընդամենը՝** | | | | | **3,301,500** | | | |

**ԳՆՈՐԴ**

ՀՀ պաշտպանության նախարարության
ՊՆ ԼՏԱ վարչության պետ

Ն. ՅՈԼՉՅԱՆ

**ՎԱՃԱՌՈՂ**

«Արփիմեդ» ՍՊԸ
տնօրեն

Վ. ՂԱԶԱՐՅԱՆ

Հավելված N 2
N ԳՀԱՊՁԲ-20-9/1-2 պայմանագրին կից
N 1 Համաձայնագրի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

| Հ/հ | CPV անվանում և ապրանքի անվանում | CPV կոդ | Ընդհանուր գին /ՀՀ դրամ/ | Վճարումը նախատեսվում է իրականացնել 2020թ., համապատասխան ամիսների, այդ թվում՝ | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | Մայիս | Հունիս | Հուլիս | Օգոստոս | Սեպտեմբեր | Հոկտեմբեր | Նոյեմբեր | Դեկտեմբեր, բայց ոչ ուշ, քան 10.12.20թ. |
| 1. | **Ամլոդիպին /ամլոդիպինի բեզիլատ/վալսարտան C09DB01** /Ամլոդիպին (ամլոդիպինի բեզիլատ), amlodipine (amlodipine besilate)/ | 33621762/502 | 25,500 | 12,750 | 12,750 | 12,750 | 12,750 | 12,750 | 25,500 | 25,500 | 25,500 |
| 11. | **Տետրացիկլին a01ab13, d06aa04, j01aa07, s01aa09, s02aa08, s03aa02/**Տետրացիկլին tetracycline/ | 33631170/508 | 72,000 | 36,000 | 36,000 | 36,000 | 36,000 | 36,000 | 72,000 | 72,000 | 72,000 |
| 15. | **Բետամեթազոն a07ea04, c05aa05, d07ac01, d07xc01, h02ab01, r01ad06, r03ba04, s01ba06, s01cb04, s02ba07, s03ba03/** Բետամեթազոն (բետամեթազոնի վալերատ) betamethasone (betamethasone valerate)/ | 33631210/508 | 336,000 | 0 | 0 | 168,000 | 168,000 | 168,000 | 336,000 | 336,000 | 336,000 |
| 16. | **Բետամեթազոն a07ea04, c05aa05, d07ac01, d07xc01, h02ab01, r01ad06, r03ba04, s01ba06, s01cb04, s02ba07, s03ba03/** Բետամեթազոն (բետամեթազոնի դիպրոպիոնատ), կլոտրիմազոլ, գենտամիցին (գենտամիցինի սուլֆատ),betamethasone (betamethasone dipropionate), clotrimazole, gentamicin (gentamicin sulfate)/ | 33631210/509 | 900,000 | 0 | 0 | 450,000 | 450,000 | 450,000 | 900,000 | 900,000 | 900,000 |
| 27. | **Հակաբակտերիալ միջոցներ՝ պարբերական օգտագործման համար/**Էրիթրոմիցին ,erythromycin/ | 33631282/513 | 950,400 | 475,200 | 475,200 | 475,200 | 475,200 | 475,200 | 950,400 | 950,400 | 950,400 |
| 32. | **Հակաբակտերիալ միջոցներ՝ պարբերական օգտագործման համար** /Էրիթրոմիցին (էրիթրոմիցինի էթիլսուկցինատ) erythromycin (erythromycin ethylsuccinate)/ | 33631282/518 | 180,000 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 180,000 | 180,000 | 180,000 |
| 38. | **Հակասնկային միջոցներ՝ պարբերական օգտագործման համար/**Կետոկոնազոլ ketoconazole/ | 33631287/505 | 801,600 | 0 | 0 | 801,600 | 801,600 | 801,600 | 801,600 | 801,600 | 801,600 |
| 49. | **Հիդրոկորտիզոն a01ac03, a07ea02, c05aa01, d07aa02, d07xa01, h02ab09, s01ba02, s01cb03, s02ba01** /Հիդրոկորտիզոն (հիդրոկորտիզոնի ացետատ ) hydrocortisone (hydrocortisone acetate)/ | 33621640/509 | 36,000 | 36,000 | 36,000 | 36,000 | 36,000 | 36,000 | 36,000 | 36,000 | 36,000 |
| **Ընդամենը** | | | **3,301,500** | **559,950** | **559,950** | **1,979,550** | **1,979,550** | **1,979,550** | **3,301,500** | **3,301,500** | **3,301,500** |

* Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:

**ԳՆՈՐԴ**

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ [illegible] վարչության պետ

Ն. ՅՈՒԼՉՅԱՆ

**ՎԱՃԱՌՈՂ**

«Արփիմեդ» ՍՊԸ
տնօրեն

Վ. ՂԱԶԱՐՅԱՆ